



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԿՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



Աշխազին Առաջնորդարավսի «Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵԼ» ՄԱՏՐԱՎ  
ԱՆՈՒԱՆԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ ՄԱՏՈՒՅՈՒՆԾ Ս. ՊԱՏԱՄԱԳԻՆ

## Ս. ԱՇԽԵԼ ԹԱԳՈՒՅԻՒՆ ՀԱՐԱՏՔԻՆ ՆՄԱՆ ԱՄՈՒՐ ՊԱՅԵՏՆՔ ՀԱՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՃԱԿԸ

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐՐԱՉԱՎԱԾ

- **ՏԻԿԻՆ ԱՇԽԵԼ ՓԻԼԱՒԹԵԱՆ 15,000 ՏՈԼԱՐԻ ՆՈՐ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ  
ՄԸ ԿԱՏԱՐԵՑ Աշխազին Առաջնորդարավսին**

«Հայաստան աշխարհը հպարտանալու արդար պատճառ ունեցած է, առաջին քրիստոնեայ թագաւորն ու թագուհին՝ Ս. Տրդատն ու Ս. Աշխելը ծնած ըլլալուն համար անոնք իրենց քրիստոնեական օրինակելի վարքով ու բարեսիրական գործերով մինչեւ օրս հայ քրիստոնեայ ընտանիքներու համար կը հանդիսանան ներշնչման աղբիւր», պատգամեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ս. Տրդատ եւ Ս. Աշխել տօնին առիթով իր մատուցած եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագի ընթացքին:

Հայ ժողովուրդի արքայական առաջին քրիստոնեայ ընտանիքին տօնը հանդիսաւորապէս եւ արժանապէս տօնախմբութեաւ Շաբաթ, 11 Յուլիսի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի մատրան մէջ, որ, ինչպէս ծանօթ է, կը կրէ առաջինի թագաւորին ու թագուհիին անունները:

Ս. Խորանին սպասարկեցին Յոզ. Տ. Վահինակ Վրդ. Մելոյեան եւ Յոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեցին Ազգ. Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երիտասարդաց երգչախումբի անդամները:

Ս. Պատարագին ներկայ էին Յոզեւորականաց Դասու անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիբիճեան, Ազգային Վարչութեան ու ժողովականութեան ներկայացուցիչներ, մատրան բարերարուիին՝ Տիկին Աշխել Փիլաւթեան, Ազգային Առաջնորդարանի բարերարներ, ինչպէս նաև բազմաթիւ հաւատացեալներ:

Մատրան մայր դուռը վերջերս գեղագարդուեցաւ խաչքարի պատկերով ապակեայ արուեստի գործով մը, ի յիշատակ Զապէլ Պասմաճեանի: Առ այդ, Ս. Պատարագին անմիջապէս առաջ տեղի ունեցաւ

մատրանս մայր դրան օժման արարողութիւնը, ի Ներկայութեան բարերար ընտանիքին:

Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազնան ու հոգեւորականաց դասը ուղղուեցան սրահ, ուր տեղի ունեցաւ մատաղի օրինութիւն:

Իր քարոզին սկզբնաւորութեան, Առաջնորդ Սրբազնաը ողջունեց Ներկայութիւնը յարգելի հիւրերուն ու հաւատացեալներու բազմութեան: Այնուհետեւ, ան անդրադարձաւ տօնին պատմական հիմքերուն՝ Ս. Տրդատ թագաւորի հեթանոսական ու դաժան կեանքին, անոր դիմաց, Ս. Աշխեն թագուհիին ամուր հաւատքին ու ընտանեկան պատիւն ու միութիւնը պահպանելու օրինակելի վարքին, ապա նաեւ՝ թագաւորին քրիստոնեութեան դարձին, Հայաստանին ու Հայ ժողովուրդին թագաւորական ընտանիքին մատուցած ծառայութիւններուն ու բարեսիրութեանց: Սրբազնաը կոչ ուղղեց Ներկաներուն, ըսելով. «Ս. Աշխեն թագուհիին հաւատքին նման ամուր պահենք հայ ընտանեկան օճախը»: Ապա իր քարոզը աւարտեց մեր հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի հետեւեալ աղօթքով. «Օրինեա՛լ է քու անքաւ մարդասիրութիւնդ, ՏԵ՛Ր իմ Յիսուս Քրիստոս: Ինչո՞ւ կը լքես զիս. Եթե մեղքերուս համար Է, Դո՛ւն միայն առանց մեղքի ես, եւ անունդ իսկ անոխակալութեան ու մարդասիրութեան ցուցանիշ Է:

«Գթա՛ ինծի, որովհետեւ Դո՛ւն միայն մարդասէր ես:

«Փրկէ՛ զիս, որ մեղքերու մէջ ինկած եմ, որովհետեւ Դո՛ւն միայն մեղք չունիս:

«Վերցո՞ւր զիս անօրէնութեանս տիղմէն, որպեսզի յաւիտեան ընկղմած չմնամ ինս:

«Ազատէ՛ զիս թշնամիէս, որովհետեւ ան առիւծի նման կը մռնչէ, եւ կ'ուզէ զիս կլլել:

«Արդ, ՏԵ՛Ր իմ, Զու շանթահարող փայլատակումովդ կործանէ՛ անոր զօրութիւնը. թող վախնայ եւ խաւարին պէս չքանայ Զու Ներկայութենետ, որովհետեւ ան տկար Է եւ անզօր՝ դիմադրելու ո՛չ միայն քեզի, այլ նաեւ ամեն անոնց՝ որոնք քեզ կը սիրեն: Երբ խաչիդ նշանին զօրութիւնը կը տեսնէ՝ կը զարհուրի, եւ ամօթով կը հեռանայ բոլոր անոնցմէ, որոնք քեզի կը դիմեն:

«Այժմ, ՏԵ՛Ր, փրկէ՛ զիս եւ կեանք տուր ինծի, որովհետեւ քեզի՝ ապաւինեցայ: Այս նեղութենեն դո՛ւրս բեր զիս, որպեսզի չըլլա՛ թէ զիս յաւիտենական կորուստի մատնէ նենգաւորը, որ ծածուկ հևարծներով հետո կը մարտնչի:

«Դուն, որ տերն ես խորհուրդներուն, եւ կը քննես սիրտերն ու միտքերը, զգուելի ու պիշտ խորհուրդներն մաքրէ՛ սիրտս ու մտածումներս, որպեսզի յաւիտենական կորուստով ի սպառ չկորսուիմ:

«Դուն, որ ամենակարող ես, գթա՛ ինծի, ո՛վ իմ Աստուածս: Տո՛ւր ինծի՝ մեղանչած հոգիիս՝ արտասուքի շնորհը, որպեսզի լուամ անթիւ մեղքերս, եւ փրկուիմ չար հրեշտակներու ձեռքեն, որոնք անողորմ կերպով գեհենի կրակին մէջ կը նետեն ամբարիշտը:

«Երանի՛ թէ միշտ լայի՛ աղաչելով քեզի, ո՛վ Աստուած, որպեսզի այս ժամուն՝ Երբ Վերստին պիտի զաս՝ անարժան չգտնուիմ եւ չլսե՛մ ահաւոր վճիռդ՝ « Յեռացի՛ր ինձմէ, անօրէնութեան մշակ, չե՛մ գիտեր՝ ուրկէ՛ ես»:

«Բարձրեալ Աստուած, միայն Դուն անմեղ ես: Դատաստանի օրը Ձու առաս գթութիւնն շնորհէ մեղաւորիս, որպեսզի ծածուկ ամբարշտութիւններս չյայտնուին տեսնողներուն՝ հրեշտակներուն եւ հրեշտակապետներուն, մարգարեներուն եւ արդար սուրբերուն:

«Փրկէ՛ զիս՝ ամբարիշտս, Ձու ողորմութեանդ պարգետով: Զիս երանաւետ դրախտեդ ներս ընդունէ՛ կատարեալ արդարներուն հետ: Ընդունէ՛ մեղաւոր ծառայիդ աղօթքները՝ բարեխօսութեամբը սուրբերուն, որոնք թեզի հաճելի եղան, ո՞վ մեր Տերը Յիսուս Քրիստոս, որ օրինեալ ես Յօրը եւ Սուրբ Հոգիին հետ, յաւիտեանս յաւիտենից: Ամեն»:

Ապա Սրբազն Յայրը յայտարարեց, թէ մատրանս բարերարուիին՝ Տիկին Աշխեն Փիլաւեան, որուն անուանակոչութեան տօնս է միաժամանակ, տօնական այս առիթով, Ազգային Առաջնորդարանիս կը կատարէ 15,000 տոլարի նոր նուիրատուութիւն մը:

Արարողութեան աւարտին, ներկաները երգեցին «Կիլիկիա» եւ «Մեր Յայրենիք» մաղթերգները, որուն յաջորդեց կոկիկ հիւրասիրութիւն մը:

## NAME DAY OF THE PRELACY CHAPEL CELEBRATED WITH DIVINE LITURGY AND THE BLESSING OF MADAGH

### - MRS. ASHKHEN PILAVJIAN MAKES A \$15,000 DONATION

On Saturday, July 11<sup>th</sup>, 2009, the Feast of St. Dertad and St. Ashkhen was celebrated at the Prelacy Chapel, which bears the name of the first Christian king and queen of Armenia.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy, delivered the sermon, and later conducted the blessing of *madagh*. Very Rev. Fr. Vaghinag Meloian and Very Rev. Fr. Barthev Gulumian assisted at the altar, while the “Lousavorich” youth choir participated in the singing.

Among those in attendance were clergy members, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Executive Council members, Chapel benefactress Mrs. Ashkhen Pilavjian, sponsors, and nearly two hundred faithful.

Immediately preceding the Liturgy, the Prelate consecrated the new stained glass which adorns the main door of the Chapel and which was recently installed in memory of Mrs. Zabel Basmajian. Members of the late Mrs. Zabel Basmajian’s family were present for the ceremony.

Following Divine Liturgy the Prelate and clergy members headed to the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where the blessing of *madagh* took place.

In his sermon the Prelate reflected on the historical origins of the feast, the paganism of King Dertad, which was in stark contrast to the staunch faith and strong family values of Queen Ashkhen, and the subsequent conversion of King Dertad to Christianity. The Prelate called on the faithful to keep their faith and family ties strong in the example of St. Ashkhen and concluded his sermon with a prayer by St. Gregory the Illuminator.

The Prelate then announced that on this joyous occasion Mrs. Ashkhen Pilavjian had made a new donation of \$15,000.

The evening came to a close with the singing of the Cilician and National anthems. A reception followed.